ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/04

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-19 գրությամբ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային ժողովի (այսուհետ՝ Պատվիրատու) 26.03.2019թ. թիվ 1/1291-19 գրության հիման վրա, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2 <u>Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ դիրքորոշում չի ներկայացվել:

Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 26.04.2019թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ՀՀ ազգանին ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային ժողովը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ազգային ժողովի կողմից «խմելու ջրերի և մեկանգամյա օգտագործման բաժակներ»-ի ձեռքբերման նպատակով 21.11.2018թ. հայտարարված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից անգործության ժամկետում բողոքներ քննող անձ՝ Էմիլ Սարգսյանին ներկայացվել է բողոք, որը բավարարվել է վերջինիս 21.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 որոշմամբ: Պատվիրատուն նշել է, որ ի պատասխան ՀՀ ազգային ժողովի՝ 04.02.2019թ. թիվ 325-19 գրության, ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2019թ. թիվ 01/26-3/2956-19 գրությամբ առաջարկվել է քննարկել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 21.01.2019թ. կայացված՝ թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/29 որոշման բողոքարկման նպատակահարմարության հարցը: 11.03.2019թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ա/Ձ Գրիգոր Բաբայանին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնել և նրա հայտը մերժել:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ծանուցվել

է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.03.2019թ. ժամը 10:30-ն) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նշված ժամկետում «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը: Ուստի՝ 15.03.2019թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշել է հիմք ընդունել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի պահանջը՝ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ տրամադրում է Ա/Ձ Գրիգոր Բաբայանի (ՀՎՀՀ՝ 83834488) և «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00136902) տվյալները, գնահատող հանձնաժողովի համապատասխան նիստերի արձանագրությունները, «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումը և նամակագրության մասին վկայող էլեկտրոնային փոստից արտահանված պատկերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 26.04.2019թ. ժամը 12:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/04 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ ազգային ժողովի կարիքների համար խմելու ջրի և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 04.12.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

3. Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն 04.12.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

4. Հանձնաժողովի քարտուղարի կողմից Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին 11.12.2018թ. ուղղված ծանուցմամբ արձանագրվել է, որ Աճուրդի հերթական նիստը կասեցվել է, քանի որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են ներկայացված: Մասնավորապես՝ պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրերի հետևյալ պահանջը՝ «Նախքան ֆիլտրումը պետք է իրականացվի ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը պետք է կատարվի ամեն օր հետադարձ լվացման մեթոդով», մասնակցի կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերում չի նշվել և առաջարկվել է Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը, ժամը 09:00) պահանջվող փաստաաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

6. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 որոշումը, որոշել է դադարեցնել Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և մերժել է վերջինիս հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-19 գրությունը, ՀՀ ազգային ժողովի 28.03.2019թ. թիվ 04/31.2/4894-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն՝

22. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից

ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ **անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:**

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

24. ***Արձանագրված անհամապատասխանությունն*** առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) ***շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.***

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ ազգային ժողովի կարիքների համար խմելու ջրի և մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 04.12.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից:

Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն 04.12.2018թ. ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին 11.12.2018թ. ուղղված ծանուցմամբ արձանագրվել է, որ Աճուրդի հերթական նիստը կասեցվել է, քանի որ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը թերի են ներկայացված: Մասնավորապես՝ պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրերի հետևյալ պահանջը՝ «Նախքան ֆիլտրումը պետք է իրականացվի ջրի համի, հոտի և գույնի համապատասխանեցում ակտիվացված ածխի ֆիլտրի օգտագործմամբ, իսկ ածխի վերականգնումը պետք է կատարվի ամեն օր հետադարձ լվացման մեթոդով», մասնակցի կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերում չի նշվել և առաջարկվել է Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. դեկտեմբերի 13-ը, ժամը 09:00) պահանջվող փաստաաթղթերը ուղարկել eauction.armeps.am համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ստորագրությամբ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 13.12.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն Աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 21.01.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/129 որոշումը, որոշել է դադարեցնել Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և մերժել է վերջինիս հայտը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալ փաստերը, նաև գործում առկա նյութերը արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 22-րդ կետով սահմանվում է, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ **անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ <u>մանրամասն</u> նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:**

Վերը նշված կարգավորումից ելնելով, գտնում եմ, որ Աճուրդի գնահատող հանձնաժողովը 11.03.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ, մերժելով Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ի հայտը, գործել է Կարգի 22-րդ կետի պահանջի խախտմամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին ուղղված ծանուցման մեջ նշված չի եղել մերժման հիմք հանդիսացող անհամապատասխանությունը, որի հետևանքով գտնում եմ, որ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ն զրկված է եղել Կարգի 23-րդ կետով սահմանված կարգով տվյալ մասով համապատասխան շտկում իրականացնելու հնարավորությունից: Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ Մասնակիցը «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա չեն Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6510-19 գրությամբ Գրիգոր Բաբայան Ա/Ձ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ